ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2011 թվականի N 30- Ա

ԳՅՈՒՂՄԹԵՐՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանարպետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2011 թվականի մարտի 14-ի թիվ 01/14.22/130-11 գրության հիման վրա հաստատել Գյուղմթերքների որակի ստուգման տնտհաշվարկային լաբորատորիա պետական ձեռնարկության լուծարման միջանկյալ հաշվեկշիռը 2011 թվականի մարտի 17-ի դրությամբ:
2. Հաստատված միջանկյալ հաշվեկշիռը ներկայացնել պետական ձեռնարկության լուծարման հանձնաժողովին:
3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ Ա. Գևորգյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

21 մարտի 2011թ.
ք. Իջևան